

Տ. ՋԱՏԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ծնվել է 1957 թ. օգոստոսի 7-ին Երևանում: Ավազանի անունն է Վաչագան:

1974 թ. ավարտել է Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան ու այն ավարտել 1979 թ. սպիտին:

1978 թ. մայիսի 27-ին Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգևոր ճեմարանն ավարտելիս Տ. Ջատիկ վարդապետ Ավետիքյանի դիպլոմային աշխատանքի թեման է եղել «Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրա նորագյուտ հատվածները»: 1980 թ. ապրիլի 23-ին, հոգևոր ճեմարանում կայացած հանդիսության ժամանակ, Տ. Ջատիկ վրդ. Ավետիքյանը հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի Կաթուղիկեի տոնին, ձեռնադրվել է կուսակրոն բահանա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

1979—1982 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1980—1982 թթ. կատարել է Վեհափառ Հայրապետի գավազանակրի պաշտոնը, կրոնագիտական առարկաներ դասավանդել հոգևոր ճեմարանում, միաժամանակ որպես ազատ ունկնդիր մասնակցել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դասընթացներին:

1982 թ. նոյեմբերին, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, հայր Ջատիկը մեկնել է Լիոն՝ ուսումը շարունակելու տեղի Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում: Հայր Ջատիկը նաև իր ծառայությունն է բերում Լիոնի, Սենթ Էթիենի և Վիենի հայկական եկեղեցիներում: